Տեղեկանք

կատարված փոփոխությունների մասին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ» ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 37. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի 1-ին և 35-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2025 թվականի հունվարի 1-ից: Մինչև սույն մասով նախատեսված հոդվածների ուժի մեջ մտնելը Օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 220-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա ներկայացված հայցադիմումները, որոնք վարույթ են ընդունվել վարչական դատարանի կողմից, շարունակում են քննվել վարչական դատարանում, իսկ 220-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա ներկայացված հայցադիմումները քննվում են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ Վարչական դատավարության օրենսգրքի 31-րդ գլխով նախատեսված կանոններով:

3. Սույն օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասը և 18-րդ հոդվածն ուժի մեջ են մտնում 2024 թվականի հունիսի 1-ից:

4. Սույն օրենքի 14-րդ, 17-րդ, 22-րդ և 29-րդ հոդվածներով նախատեսված դրույթները տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ընդունվող միջանկյալ դատական ակտերի վրա:

5. Սույն օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ կետը տարածվում է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ներկայացված վերաքննիչ բողոքների քննության վրա:

6. Սույն օրենքի 25-րդ և 26-րդ հոդվածները տարածվում են սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված վճռաբեկ բողոքների քննության վրա: